

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՎ

ՔԵՄՈՆԻՔՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2002

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE
AND
CHEMONICS INTERNATIONAL INC.

COLLECTION OF JUDGMENTS
OF EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Մասնագիտական խմբագիր

YEREVAN 2002

Ալվինա Գյուլումյան
ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ դատավորների միության նախագահ

Պատասխանատու խմբագիր

Լիանա Հակոբյան
ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ

Լեզվական խմբագիր

Աիդա Կարապետյան

Ժողովածուի մեջ ընդգրկված վճիռները անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Սուսաննա Բաղդասարյանը
Կարինե Բալայանը

ԲԱՌԻՄԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

CASE OF BOWMAN v. THE UNITED KINGDOM

(Գանգատ թիվ 141/1996/760/961)

Դատարանի 1998թ. փետրվարի 19-ի վճիռը

Ստրասբուրգ

Բառւմանն ընդդէմ Միացյալ Թագավորության գործով

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, համաձայն
Դատարանի Ա կանոնակարգի 52-րդ կանոնի, նիստ գումարելով որպես Մեծ
պալատ՝ հետևյալ կազմով՝ պրն Ռ. Բերնհարդտի, Նախագահ, պրն Թոր
Վիլյամսոնի, պրն Լ.-Ե. Պետիտի, պրն Բ. Վոլշի, պրն Ռ. Մաքդոնալդի,

պրն Ք. Ռուսոյի, պրն Ա. Սպիլմանի, պրն Ն. Վալտիկոսի, տկն Ի .
Պալմի, պրն Ա. Ն. Լուիզուի, սըր Ջոն Ֆրիլանդի, պրն Ա. Բ. Բակայի,

պրն Մ.Ա. Լոպես Ռոշայի, պրն Լ. Վիլդհաբերի, պրն Դ. Գոթչևի,

պրն Պ. Ջամբրեկի, պրն ՈՒ. Լուինուսի, պրն Ի. Լևիցի,

պրն Ջ. Կասադիվալի, պրն Պ. Վան Դիջկի, դատավորներ,

ինչպես նաև պրն Յ. Պետզոլդի, Քարտուղար, պրն Պ. Ջ. Սահոնեի,
Փոխքարտուղար,

1997թ. հոկտեմբերի 25-ին և, դափնակ խորհրդակցություն անցկացնելով,
1998թ. հունվարի 29-ին ընդունեց հետևյալ վճիռը:

Վ Ա Ր ՈՒ Յ Թ Ը

1. Գործը Դատարան էր ուղարկվել Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») և Մեծ Բրիտանիայի ու Յուոսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության («Կառավարություն») կողմից 1996թ. հոկտեմբերի 19-ին և 1997թ. հունվարի 7-ին՝ համապատասխանաբար Կոնվենցիայի (Convention) 32-րդ հոդվածի 1-ին կետով և 47-րդ հոդվածով նախատեսված եռամսյա ժամկետում: Գործի համար առիթ է հանդիսացել 1994թ. մարտի 11-ին Մեծ Բրիտանիայի քաղաքացի տկն Ֆիլիս Բաունանի կողմից 25-րդ հոդվածի հիման վրա՝ ընդդեմ Միացյալ Թագավորության Հանձնաժողովին ուղղված գանգատը (թիվ 24839/94):

Հանձնաժողովի դիմումը հիմնվում է Կոնվենցիայի 44-րդ և 48-րդ հոդվածների, ինչպես նաև այն հայտարարության վրա, որով Միացյալ Թագավորությունը ճանաչել է Դատարանի իրավազորությունը (46-րդ հոդված): Խնդրո առարկան, ինչպես նաև Կառավարության դիմումի նպատակն էր՝ որոշել, թե արդյոք գործի հանգամանքները վկայում են պատասխանող պետության կողմից Կոնվենցիայի (Convention) 10-րդ հոդվածով նախատեսված իր պարտավորությունների խախտման մասին:

2. Ի պատասխան հարցման, որն արվել էր համաձայն Դատարանի Ա կանոնակարգի 33-րդ կանոնի 3-րդ կետի «դ» մասի, դիմողը հայտարարել էր դատավարությանը մասնակցելու իր ցանկության մասին և իրեն ներկայացնելու համար դիմել էր իրավաբանի օգնության (30-րդ կանոն):

3. Պալատի կազմում *ex officio* (ի պաշտոնե) ներգրավված էին՝ սըր Ջոն Ֆրիլանդը՝ որպես Մեծ Բրիտանիայից ընտրված դատավոր (Կոնվենցիայի 43-րդ հոդված), պրն Ռ. Բերնհարդտը՝ որպես Դատարանի փոխնախագահ (21-րդ

կանոնի 4-րդ կետի «բ» մաս): 1996թ. հոկտեմբերի 29-ին՝ Քարտուղարի ներկայությամբ, Ղատարանի նախագահ պրն Ռ. Ռիսդալը ներկայացրել է մյուս 7 անդամների անունները՝ պրն Լ.-Ե. Պետիտի, պրն Բ. Վոլշ, պրն Բ. Ռուսո, պրն Ա. Սպիլման, պրն Ա. Ն. Լուիզու, պրն Մ. Ա. Լոպես Ռոշա և պրն Պ. Ջամբրել (Կոնվենցիայի 43-րդ հոդվածի և 21-րդ կանոնի 5 կետ in fine):

4. Որպես Պալատի նախագահ (21-րդ կանոնի 6 կետ) պրն Բերնհարդտը գործի վարույթի կազմակերպման հարցերի շուրջ Քարտուղարի միջոցով խորհրդակցել է Կառավարության ներկայացուցչի, դիմողի ներկայացուցչի և Հանձնաժողովի պատվիրակի հետ (37-րդ կանոնի 6-րդ կետ և 38-րդ կանոն): Համաձայն ընդունված կարգադրության և ժամկետների երկարաձգման վերաբերյալ դիմողի խնդրանքի՝ Քարտուղարը Կառավարությունից հուշագիր է ստացել 1997թ. հունիսի 3-ին, իսկ դիմողից՝ 1997թ. հուլիսի 18-ին:

5. Նախագահի որոշման համաձայն՝ գործի քննությունը տեղի է ունեցել դռնբաց միստում՝ Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1997թ. օգոստոսի 27-ին: Ղատարանը նախօրոք կազմակերպել էր նաև նախապատրաստական հանդիպում:

Ղատարանի առջև հանդես են եկել՝

ա. Կառավարության անունից՝

պրն Դ. Բենթլին, Արտաքին համագործակցության գրասենյակ,

գործակալ,

պրն Դ. Պանիկ ԲԿ,

պրն Դ. Անդերսոնը,

փաստաբան,

պրն Ռ. Կլեյտոնը, Ներքին գրասենյակ

խորհրդատու.

բ. Կոմիտեի անունից՝

պրն Լ. Լուկեյդիսը,

պատգամավոր.

գ. Դիմողի անունից՝

պրն Գ. Ռոբերտսոնը

փաստաբան,

պրն Դ. Պրայսը,

սոլիսիտոր:

Դատարանը լսել է պրն Լուկայդիսի, պրն Պանիկի և պրն Ռոբերտսոնի ելույթները:

6. 1997թ. օգոստոսի 29-ի քննարկումներից հետո Պալատը որոշել է իրավագորությունը փոխանցել Մեծ պալատին (51-րդ կանոն):

7. Մեծ պալատի կազմում *ex officio* ընդգրկված էին պրն Ռիսդալը՝ Դատարանի նախագահ, և պրն Բերնհարդտը՝ փոխնախագահ, մյուս անդամների և սկզբնական Պալատի փոխարինող դատավորների հետ մեկտեղ՝ տկն Ի. Պալմը և պրն Զ. Կասադիվալը (51-րդ կանոնի 2-րդ կետի «ա» և «բ» մասեր): 1997թ. օգոստոսի 30-ին Նախագահը՝ Մեծ պալատի դատավորների կազմը լրացնելու նպատակով, Քարտուղարի ներկայությամբ, վիճակահանությամբ որոշել է մյուս ինը դատավորներին, որոնք են՝ պրն Թոր Վիլյամսոնը, պրն Ռ. Մաքդոնալդը, պրն Ն. Վալտիկոսը, պրն Ա. Բ. Բական, պրն Լ. Վիլդիաբերը, պրն Դ. Գոթչևը, պրն ՌԻ. Լուիմուսը, պրն Ի. Լևիցը և պրն Պ. Վան Դիջկը (51-րդ կանոնի 2-րդ կետի «գ» մաս):

8. Հաշվի առնելով Կառավարության ներկայացուցչի համաձայնությունը, Հանձնաժողովի պատվիրակի և դիմողի համընկնող կարծիքները՝ 1997թ. հոկտեմբերի 25-ին Դատարանը որոշում է կայացրել, որ գործի հետագա քննության անհրաժեշտություն չկա, քանի որ այն թողնված է Պալատի իրավագործությանը (38-րդ կանոն և 51-րդ կանոնի 6-րդ կետ):

9. Համապատասխանաբար պրն Բերնհարդտը փոխարինել է պրն Ռիսդալին, որը չէր կարող որպես Մեծ պալատի նախագահ մասնակցել գործի հետագա քննությանը (21-րդ կանոնի 5-րդ կետ):

ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

10. Տկն Ֆիլիս Բաումանը ծնվել է 1926թ. և բնակվում է Լոնդոնում: Նա Չծնված երեխաների պաշտպանության ընկերության (ՉԵՊԸ- (SPUC)) գործադիր տնօրենն է: Ներկայումս տվյալ կազմակերպությունում ընդգրկված է մոտ 50.000 անդամ, ովքեր պայքարում են արհեստական վիժեցման և մարդու սաղմի հետ փորձարկումներ կատարելու դեմ և հետամուտ են Միացյալ Թագավորության օրենսդրության փոփոխություններին, որը թույլ է տալիս մինչև 22 շաբաթվա հղիության արհեստական վիժեցում, իսկ սաղմի փորձարկումները՝ մինչև 14 օրվա դեպքերում:

11. Հիմնական քաղաքական կուսակցությունները որոշակի դիրքորոշում չունեն արհեստական վիժեցման կամ սաղմի փորձարկումների վերաբերյալ. դրանք համարվում են բարոյականության հետ կապված հարցեր և խորհրդարանի անդամները կարող են քվեարկել առաջարկվող

օրենսդրությանն իրենց խղճի մտքը: Ուստի տկն Բաումանի և ՉեՊԸ–ի տեսակետն այն է, որ եթե ընտրողներն իրենց ներկայացուցչի միջոցով հնարավորություն ունեն ազդելու օրենքի փոփոխությունների վրա, նրանց համար կարևոր է գիտենալ թեկնածուների կարծիքն արհեստական վիժեցման և դրա հետ կապված հարցերի վերաբերյալ:

12. 1992թ. ապրիլին՝ մինչև խորհրդարանական ընտրություններն ընկած ժամանակահատվածը, տկն Բաումանը կազմակերպել էր 1.5 մլն թռուցիկների տարածում՝ ընդգրկելով Մեծ Բրիտանիայի բոլոր ընտրական շրջանները, անգամ Հալիֆաքսում բաժանելով 25000 թռուցիկ: Թռուցիկներում մասնավորապես ասվում էր.

«Մենք ձեզ չենք թելադրում ինչպես քվեարկել, սակայն կարծում ենք, որ անհրաժեշտ է իմանալ թեկնածուի կարծիքն արհեստական վիժեցման և մարդու սաղմը՝ որպես փորձաճագար օգտագործելու վերաբերյալ»:

Տերի Մարտին՝ պահպանողական կուսակցություն.

Պրն Մարտինը հրապարակայնորեն հայտարարել էր չծնված երեխաներին պաշտպանելու իր կայուն համոզմունքի մասին: Ընտրվելու դեպքում նա իր ձայնը կտա արհեստական վիժեցման հիմքերն ամրացնելու օգտին՝ ըստ պահանջի արհեստական վիժեցումն արգելելու համար: Նա կքվեարկի 24-շաբաթյա հղիության արհեստական վիժեցման դեմ, մինչդեռ ներկայումս օրենքով նախատեսված է հաշմանդամ երեխաների արհեստական վիժեցումը՝ մինչև նրանց ծնունդը ներառյալ, ինչպես նաև այլ հիմքեր: Նա դեմ կքվեարկի նաև դեղամիջոցների փորձարկման նպատակով մարդու սաղմի ստեղծմանն ու օգտագործմանը:

Ալիսոն Մեյհեն՝ լեյբորիստական կուսակցություն.

Տկն Մեյհենը հայտնի է որպես արհեստական վիժեցման կողմնակից: Որպես խորհրդարանի անդամ՝ նա կողմ է քվեարկել ընդհուպ մինչև ծնունդը արհեստական վիժեցմանն այն դեպքում, երբ հնարավոր է հաշմանդամ երեխայի ծնունդը: Նա նաև կողմ է քվեարկել այն բժիշկների պարտադիր ցուցակագրման և ցուցակի հրապարակման օգտին, ովքեր գիտակցաբար հրաժարվում են արհեստական վիժեցում կատարելուց, չնայած այն հանգամանքին, որ դրանք կարող են օգտագործվել որպես սև ցուցակներ: Նա նաև քվեարկել է մարդկային սաղմը որպես փորձաճագար, ներառյալ դեղամիջոցների փորձարկման և այլ փորձերի նպատակով օգտագործելու ծրագրերի օգտին:

Յան Ջովել՝ լիբերալ ժողովրդավարական կուսակցություն.

Ընտրվելու դեպքում պրն Ջովելը քվեարկելու է ըստ պահանջի արհեստական վիժեցումն արգելելուն կողմ: Նա նաև քվեարկելու է արհեստական վիժեցման ժամկետային սահմանափակումը մինչև 24 շաբաթի կամ ավելի նվազ ժամկետի նվազեցնելու օգտին, այն դեպքում, երբ գործող օրենքը հաշմանդամ երեխաների ծնունդը կանխելու, ինչպես նաև այլ դեպքերում արհեստական վիժեցումը թույլատրում է մինչև ծննդյան պահը: Նա դեմ է քվեարկելու մարդու սաղմը փորձարարական նպատակներով օգտագործելու բոլոր ծրագրերին»:

ԶԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Թռուցիկի շրջերեսին, լուսանկարի հետ, որի տակ գրված էր «չծնված երեխան հղիացումից տասը շաբաթ անց», տպագրված էր.

«Կյանքի առաջին շաբաթը

1-ին օր. Հղիացում - սերմնահեղուկի և ձվաբջջի բեղմնավորումից հետո ծագումնաբանության ընթացքն ավարտված է: Աչքերի, մազերի գույնը, սեռը որոշված է: Արդեն կնոջ արգանդի ֆալոպյան փողերում գոյություն ունի եզակի անձ:

12-րդ օր. Փողերից մուտք է գործում արգանդ և տեղավորվում այնտեղ:

17-րդ օր. Սեփական արյան բջիջների զարգացում:

21-րդ օր. Սիրտն սկսում է բաբախել: Սա այնքան տպավորիչ է, որքան ծնունդը, սակայն անհամեմատ, քան բեղմնավորումը:

26-րդ օր. Նյարդային համակարգի հիմքերի կազմավորումը:

30-րդ օր. Կանոնավոր արյան հոսքը փակ մազանոթային համակարգում: Ականջների և քթի զարգացման սկիզբը:

42-րդ օր. Կազմավորվում են ոսկրային համակարգը և ռեֆլեքսները: Առկա են լյարդը, երիկամները և թոքերը: Բերանին դիպչելիս՝ կարող է արձագանքել:

45-րդ օր. Կարելի է ձայնագրել ուղեղի ալիքների գործունեությունը:

56-րդ օր. Բացի թոքերից, մյուս բոլոր օրգանները գործում են, նրան մնում է միայն աճել և հասունանալ, ինչպես երեխան կյանքի ընթացքում փոքրից դառնում է մեծահասակ:

65-րդ օր. Երեխան կարող է ձեռքը սեղմել և բռնել ափին բախվող առարկան՝ համաձայնեցված շարժումներով արգանդում թռչելով դեպի վեր և վար :

12-րդ շաբաթ. Ամբողջ մարմնի մակերեսը զգայուն է դրան դիպչելիս:

16-րդ շաբաթ. Երեխայի հասակը համապատասխանում է ծնվելու պահի հասակի կեսին, սիրտը փոխանցում է օրական արյան մինչև 50 պինտա: 28-րդ շաբաթ. Աչքերը բաց են: Երեխան կարող է լսել մոր մարսողական պրոցեսի ժամանակ հնչող ձայները, սրտի աշխատանքը և ինչպես նրա, այնպես էլ դրսից լսվող ձայները:

9-րդ ամիս. Ծնունդ- սա հենց առաջավոր գործընթացի հաջորդ աստիճանն է: Ասվածից երևում է, որ երեխան կարող է ցավ զգալ նաև վաղ փուլում: Իսկ մենք, երեխայի կազմավորվելուց հետո, մինչև 6 ամսական դառնալը, նույնիսկ մինչև ծնունդը (երեխայի հաշմանդամ լինելու դեպքում), իրագործում ենք նրա ցավալի ոչնչացումը»:

13. Տկն Բաունմանը մեղադրվել է 1983թ. (1983թ. օրենք) ժողովրդի ներկայացուցչության մասին օրենքի 75-րդ մասի 1-ին և 5-րդ ենթակետերի խախտման համար, որն արգելում է լիազորություն չունեցող անձին ընտրությունների նախօրեին ծախսել 5 ֆունտ ստեռլինգից (“GBP”) ավելի՝ ընտրողներին տրամադրելով տեղեկություններ, որի նպատակն է նպաստել որևէ թեկնածուի ընտրությանը (տես ստորին՝ 17–19 կետերը):

14. 1993թ. սեպտեմբերի 27-ին Սաութվորք Կրաուն դատարանում՝ (Southwark Crown Court) տկն Բաունմանի գործի վերաբերյալ դատական քննության ընթացքում, դատավորը նրան արդարացրել է այն հիմքով, որ

նրան առաջադրվող մեղադրանքների վերաբերյալ ծանուցումները չեն հանձնվել 1983թ. օրենքի 176-րդ հոդվածով սահմանված մեկամյա թույլատրելի ժամկետում: Գործի քննության ընթացքին հետևում էր նաև մամուլը:

15. 1979թ. նմանատիպ օրենքների հիման վրա տկն Բաումանը մեղադրվել էր Ջյուսիսային Իլֆորդում (North Ilford) լրացուցիչ ընտրությունների նախօրեին թռուցիկների տարածման համար, 1982թ. նա կրկին մեղադրվել էր Եվրոպական Խորհրդարանի ընտրությունների ժամանակ թռուցիկների տարածման համար: Երկու դեպքում էլ կարգադրվել էր վճարել տուգանք և հետապնդման ծախսերը:

ԳՈՐԾԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Ա. Խորհրդարանական ընտրություններ

16. Հիմնական ընտրությունների օրն նշանակվել է գործող Վարչապետի կողմից և դրա մասին հայտարարվել է 4-6 շաբաթ առաջ՝ մինչև քվեարկության օրը:

17. Ընտրություններն անցկացնելու նպատակով Մեծ Բրիտանիայի տարածքը բաժանվել էր ընտրատարածքների: Յուրաքանչյուր ընտրատարածք ներկայացված էր Խորհրդարանում մեկ ներկայացուցչով՝ անձ, որն իր ընտրատարածքում հավաքել էր ձայների առավելագույն քանակ: Մեծ թվով թեկնածուներ առաջադրվել էին հիմնական ազգային կուսակցություններից, թեպետ ոմանք մասնակցում էին որպես անկախ

թեկնածուներ: Թեկնածուի առաջադրումը պետք է ապահովված լիներ 10 անձի ստորագրությամբ, ովքեր որպես ընտրող գրանցված են տվյալ ընտրատարածքում: Յուրաքանչյուր թեկնածու, համապատասխան ընտրատարածքի պատասխանատու պաշտոնյային պարտավոր է մուծել կանխավճար՝ 500 GBP չափով: Ձայների առնվազն 5%-ը չստանալու դեպքում կանխավճարը չի վերադարձվում:

Բ. Ընտրական ծախսերի վերահսկումը

18. Միացյալ Թագավորությունում ընտրական քարոզարշավի ընթացքում Խորհրդարանի թեկնածուները պետության կողմից չեն ֆինանսավորվում: Թեկնածուների դիրքերն ապահովելու նպատակով հիմնական ֆինանսական օգնություն չի տրամադրվում. ինչպես նախքան ընտրությունները, այնպես էլ դրա ընթացքում և դրա ավարտից հետո թեկնածուի ծախսերի թույլատրելի չափը սահմանվում է օրենքով (1983թ. օրենքի 73-րդ, 76-րդ և 81-րդ մասեր): Այդ չափը կարող է տատանվել՝ պայմանավորված տվյալ ընտրատարածքի չափով, սակայն միջինը կազմում է 8.300 GBP: Սահմանված չափերը չխախտելու նպատակով, ընտրական ծախսերը պետք է կատարվեն ընտրական գործակալի կողմից, որը պարտավոր է ընտրություններից հետո հաշվետվություն ներկայացնել դրանց օգտագործման վերաբերյալ (1983թ. օրենքի 73-րդ, 76-րդ և 81-րդ մասեր):

19. Համաձայն 1983թ. օրենքի 75-րդ մասի 1 ենթակետի, ցանկացած ծախս, որը կատարվում է թեկնածուից կամ նրա գործակալներից բացի որևէ

անձի կողմից՝ տվյալ թեկնածուի ընտրությանն աջակցելու նպատակով, խստիվ արգելվում է:

«Արգելվում է բացի թեկնածուից նրա ընտրական գործակալից կամ վերջինիս կողմից գրավոր լիազորված անձից, որևէ այլ անձի կողմից թեկնածուի ընտրությանն աջակցելը կամ ներդրումներ կատարելը.

ա. կազմակերպելով հասարակական հավաքներ կամ ցույցեր, կամ

բ. տարածելով գովազդներ, շրջաբերականներ, կամ

գ. այլ կերպ ներկայացնելով թեկնածուին, նրա հայացքները կամ նսենացնելով այլ թեկնածուի,

սակայն (գ) կետը չի նշանակում՝

i. սահմանափակում թերթերում կամ այլ պարբերական մամուլում կամ BBC-ի կողմից ընտրությունների վերաբերյալ նյութերի հրատարակումը,

ii. օրենքով նախատեսված 5 GBP-ն գերազանցող գումարի ծախսման արգելք:

Ենթակետում նշված «թեկնածուի ընտրությանն աջակցել կամ ներդրումներ կատարել» արտահայտությունը, ըստ Լորդերի պալատի մեկնաբանության՝ ներառում է նաև որոշակի թեկնածուի կամ թեկնածուների ընտրությանը խոչընդոտելու հնարավորություն (Գլխավոր դատախազն ընդդեմ Լյուֆտի (1977) 962 բողոքարված գործեր):

20. Տկն Բաունանը մեղադրվել էր 1983թ. օրենքի 75-րդ մասի 5-րդ ենթակետով, որում, մասնավորապես, ասվում է.

«Եթե անձն ի խախտումն (175-րդ բաժնի) կատարում է ծախսումներ կամ աջակցում է այդ ծախսերին, մասնակցում է այդ ծախսերին կամ ինչ-որ մեկին դրդում է այդ ծախսերի կատարմանը, կմեղադրվի հովանավորչական (կոռուպցիոն) գործունեությամբ զբաղվելու մեջ»:

21. Համաձայն 75-րդ մասի 1-ին և 2-րդ ենթակետերի՝ առավելագույն պատիժը տվյալ հանցանքի դեպքում սահմանված է մինչև 1 տարի ազատազրկում և, կամ մինչև 5000 GBP-ի չափով տուգանք: Բացի դրանից, 1983թ. օրենքի 160 (4), 168(1), 173 մասերի համաձայն՝ մեղադրվող անձը կարող է մինչև 5 տարի ժամանակով զրկվել ընտրություններում քվեարկելու, ընտրվելու, համայնքների պալատում ընդգրկվելու կամ որևէ դատական կամ պետական պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

22. 75-րդ մասը վերաբերում է միայն առանձին թեկնածուի առանձին ընտրատարածքում ընտրություններին առնչվող ծախսերին: Այն չի վերաբերում քաղաքական կուսակցություններին կամ հարուստ անհատներին կամ կազմակերպություններին, որոնք ազգային կամ տարածքային մակարդակով կարող են հրապարակայնորեն գումարներ հատկացնել քաղաքական կուսակցությանը կամ որևէ հոսանքի՝ ընդհանուր առմամբ նրանց աջակցելու կամ խոչընդոտելու նպատակով, սակայն պայմանով, որ դա միտված չի լինի տվյալ ընտրատարածքի որևէ կոնկրետ թեկնածուի ընտրական հնարավորություններին աջակցելուն կամ խանգարելուն (տես Ռ.-ն ընդդեմ Տրոնոհ Մայնսի, 1952թ., 1 Անգլիայի զեկույցներ 697): Չկա սահմանափակում նաև որևէ թեկնածուի օժանդակելու կամ չխոչընդոտելու նպատակով քաղաքական կուսակցությունների մասնավոր նվիրատվությունների կամ մամուլի ուժն օգտագործելու համար (տես 1983թ. օրենքի 75-րդ մասի 1-ին ենթակետի «գ» և «թ» և վերոհիշյալ 19 կետերը):

ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՄ

23. 1994թ. մարտի 11-ին (թիվ 24839/94) գանգատը Հանձնաժողովին ներկայացվել է տկն Բաումանի և ՉԵՊԸ-ի կողմից համատեղ: Երկու դիմողներն էլ դժգոհում էին, որ տկն Բաումանին մեղադրելիս խախտվել է Կոնվենցիայի (Convention) 10-րդ հոդվածում նախատեսված ազատ արտահայտման իրենց իրավունքը: Նրանք նաև հիշատակել են Կոնվենցիայի (Convention) 13-րդ հոդվածը:

24. 1995թ. դեկտեմբերի 4-ին Հանձնաժողովը տկն Բաումանի գանգատը հայտարարել է ընդունելի միայն Կոնվենցիայի (Convention) 10-րդ հոդվածի մասով: Հանձնաժողովը միաժամանակ գտել է, որ ՉԵՊԸ-ն չի կարող տկն Բաումանի գործով տուժող համարվել և հայտարարել է, որ մյուս բողոքն անընդունելի է:

1996թ. (31-րդ հոդված) սեպտեմբերի 12-ի իր զեկույցում Հանձնաժողովը, արտահայտելով իր կարծիքը՝ 28 կողմ և 1 դեմ՝ ձայների առավելությամբ , արձանագրել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

ԳՈՐԾԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

25. Իր բացատրություններում և դատական նիստի ընթացքում Կառավարությունը, Հանձնաժողովի կարծիքին հակառակ, նշել է, որ գանգատը պետք է անընդունելի հայտարարվի Կոնվենցիայի (Convention)

25-րդ հոդվածի հիման վրա: Որպես առարկություն՝ Կառավարությունը նշում էր 10-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված՝ դիմողի արտահայտվելու ազատության սահմանափակման բացակայության մասին, և որ համաձայն 10-րդ հոդվածի 2-րդ կետի, եթե նույնիսկ առկա էր այդ ազատության սահմանափակում, այն անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում՝ 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով:

Դիմողը խնդրել է Ղատարանին ճանաչել 10-րդ հոդվածի խախտումը և 50-րդ հոդվածի համաձայն իրեն տրամադրել արդարացի փոխհատուցում:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐՑԵՐ

I.ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

26. Կառավարությունն առարկում էր տկն Բաումանի՝ Կոնվենցիայի (Convention) խախտումների հետևանքով «տուժողի» կարգավիճակ ունենալու դեմ՝ համաձայն 25-րդ հոդվածի 1-ին կետի, որում մասնավորապես ասված է.

«Չանձնաժողովը կարող է գանգատներ ստանալ ցանկացած անձից՝ ով պնդում է, որ ինքը Կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտման զոհ է»:

Կառավարությունը նշել է այն փաստը, որ դատավորը, որը 1993թ. սեպտեմբերի 28-ին երդվյալներին դրդել է արդարացնելու մեղադրյալին, նշել է, որ տվյալ հանգամանքներում անհնարին է ասել, որ դատավարությունը

շարունակվելու դեպքում նա կդատապարտվեր կամ օրենքը կկիրառվեր ի վնաս նրա:

27. Դիմողը նշել է, որ 1983թ. օրենքի 75-րդ մասն իր նկատմամբ կիրառելու հետևանքով ինքը տառապել է անհանգիստ վիճակից, պարսավանքների ենթարկվելուց, ուստիկանության հետապնդումներից, իրեն մեղադրող շրջապատի ազդեցությունից:

28. Հանձնաժողովն ընդունելիության որոշման մեջ հաստատել է, որ տկն Բաումանն ուղղակիորեն տուժել էր իր դեմ հարուցված հետապնդումից, ուստի կարող էր համարվել միջամտության զոհ:

29. Դատարանը գտնում է, որ ազդեցության միջոցը, այն է՝ հետապնդումը, տկն Բաումանի դեմ իրականացվել է: Թեև նրան արդարացրել են զուտ տեխնիկական պատճառներով, այն է՝ որ դատական ծանուցումներն օրենքով սահմանված ժամկետում չեն հանձնվել (տես վերոհիշյալ 14-րդ կետը): Այն փաստը, որ քրեական հետապնդման մարմինները որոշել էին դիմողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնել, առնվազն նրան լրջորեն նախազգուշացնում էր, որ եթե նա հաջորդ ընտրությունների ժամանակ չփոխի իր վարքագիծը, ապա կրկին կենթարկվի հետապնդման և, հավանաբար, կմեղադրվի և կպատժվի:

Նման պայմաններում Դատարանը որոշել է, որ տկն Բաումանը կարող է պնդել, որ խնդրո առարկա օրենքն իր վրա ուղղակի ազդեցություն է ունեցել (տես, ի թիվս այլ աղբյուրների՝ Նորիսն ընդդեմ Իռլանդիայի 1988թ. հոկտեմբերի 26-ի, Շարքեր Ա, թիվ 142 վճռի էջ 16, 31-րդ կետ), և ուստի Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետի իմաստից ելնելով՝ կարող է համարվել Կոնվենցիայի խախտման զոհ:

Կառավարության կողմից ներկայացված նախնական առարկությունը համապատասխանաբար մերժվել է:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄ

30. Տկն Բաումանը պնդում է, որ խախտվել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված ազատ արտահայտվելու իր իրավունքը. այդ հոդվածով նախատեսվում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք:

Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից ...

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների ու պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Հանձնաժողովը համաձայնել է խախտման առկայության փաստին, սակայն Կառավարությունը վիճարկում է խախտման փաստի առկայությունը:

Ա. Սահմանափակման առկայությունը

31. Կառավարությունը պնդում էր, որ տկն Բաունանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակում տեղի չի ունեցել, քանի որ 1983թ. օրենքի 75-րդ բաժինը սահմանափակում է միայն խորհրդարանական ընտրությունների ընթացքում ոչ իրավասու անձանց կողմից որևէ կոնկրետ թեկնածուի ընտրությանն աջակցելու նպատակով կատարված ներդրումների ազատությունը, այլ ոչ թե նրանց կարծիքների արտահայտման ազատությունը կամ ընդհանրապես տեղեկություն տարածելու ազատությունը (տես վերոհիշյալ 19-րդ կետը):

32. Հանձնաժողովը, ինչպես դիմողը նկատել է, որ հետապնդում իրականացնող մարմինները նրա վարքագիծն ակնհայտորեն ընկալում էին օրենսդրական արգելքի շրջանակներում, որը հետապնդման վախի միջոցով հանգեցնում է արտահայտվելու ազատության սահմանափակման:

33. Դատարանը նշում է, որ 1983թ. օրենքի 75-րդ բաժինը ուղղակիորեն չի սահմանափակում ազատ արտահայտվելու իրավունքը, այլ 5 GBP-ով սահմանափակում է այն գումարի չափը, որն ընտրությունների ընթացքում ոչ իրավասու անձինք իրավունք ունեն ծախսել հրապարակման կամ հաղորդակցման այլ միջոցների վրա: Ավելին, այն ընդհանրապես տեղեկություններ կամ տեսակետներ տարածելու սահմանափակում չէ, այլ միայն սահմանափակում է այն ծախսերը, որոնք կատարվել են

համապատասխան ժամանակահատվածում «թեկնածուի ընտրությանը նպաստելու նպատակով»:

Այնուամենայնիվ, կասկած չկա, որ 75-րդ բաժնում պարունակվող արգելքը վերաբերում է խոսքի ազատությանը, որի պատճառով տուժել է տկն Բաումանը (տես վերոհիշյալ 29-րդ կետը):

34. Ուստի պետք է քննարկել, թե արդյոք այս սահմանափակումը «նախատեսված է օրենքով», հետապնդում է, արդյոք, իրավաչափ նպատակ և արդյոք «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Բ «Օրենքով նախատեսված»

35. Դատարանը գտնում է, որ անշուշտ Դատարանում չի վիճարկվել Դատարանում, որ 1983թ. օրենքի 75-րդ բաժնում սահմանված ծախսերի վերաբերյալ սահմանափակումը «նախատեսված է օրենքով»:

Գ. Իրավաչափ նպատակ

36. Կառավարությունը նշել է, որ 1983թ. օրենքի 75-րդ բաժնով նախատեսված ծախսերի չափը նպատակ ուներ պաշտպանելու այլոց իրավունքները հետևյալ 3 եղանակներով: Առաջին՝ այն նպաստում է ընտրություններին մասնակցող թեկնածուների միջև արդարությանը, կանխելով հարուստ երրորդ կողմի ընտրական քարոզարշավը, որևէ կոնկրետ թեկնածուին դեմ կամ կողմ կամ որևէ թեկնածուի ընտրական բյուջեի օգտին նվիրատվություն կատարելը, որը սահմանափակված է օրենքով (տես

վերոհիշյալ 18-րդ կետը) և որի համար նախատեսված է պատասխանատվություն: Երկրորդ՝ երրորդ կողմի ծախսերի սահմանափակումն օգնում է ապահովելու թեկնածուների անկախությունը հարուստ խմբերի ազդեցությունից: Երրորդ՝ այն կանխում է ընտրական ժամանակահատվածում քաղաքական վիճաբանություններն այլ հարցերի կողմն ուղղելով՝ բանավեճի առարկայից շեղումը:

37. Ըստ դիմողի՝ 75-րդ բաժինը իրավաչափ նպատակ չի հետապնդում, այլ նվազեցնում է խոսքի ազատության արտահայտման հնարավորությունները: Անգամ ծայրահեղ դեպքում առանձին խմբի համար, ինչպիսին ՉԵՊԸ-ն է, հնարավոր չէ ընտրողներին շեղել հիմնական քաղաքական ծրագրից այնպես, որ դա խոչընդոտի ընտրությունների ընթացքը: Ավելին, չի կարելի ասել, որ ծախսերի վերաբերյալ սահմանափակումներն ապահովում են թեկնածուների հավասարությունը, որովհետև նրանք արդեն ունեցել են անհավասար լինելու առիթներ, նկատի ունենալով, որ նրանք հիմնական կուսակցություններից կարող են արդեն աջակցություն ստանալ, որոնք ազատ են համազգային մակարդակով քարոզարշավի համար ծախսել անսահմանափակ չափով գումար, քանի դեռ նրանք չեն փորձում աջակցել կամ խոչընդոտել որևէ կոնկրետ թեկնածուի (տես վերոհիշյալ 22-րդ կետը):

38. Դատարանը գտնում է, որ 75-րդ բաժինը, մասնավորապես, 1983թ. օրենքում այլ ծախսումների վերաբերյալ մանրամասնված դրույթների համատեքստում նպատակ ունի ապահովելու հավասարությունը թեկնածուների միջև: Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, ինչպես դա արել է Հանձնաժողովը, որ տկն Բաումանի նկատմամբ այս օրենքի կիրառումը հետապնդում էր հետևյալ իրավաչափ նպատակը՝ այլոց, այն է՝

ընտրությունների թեկնածուների, Հալիֆաքսի ընտրողների իրավունքների պաշտպանությունը՝ նկատի ունեն քրեական հետապնդման ահազնացող բնույթը ողջ Միացյալ Թագավորության տարածքում:

Դատարանը գտնում է, որ դիմողի կողմից ներկայացված փաստարկներն առավելապես առնչվում են սահմանափակումների «անհրաժեշտությանը ժողովրդավարական հասարակությունում», որի վերաբերյալ այժմ հարց է առաջանում:

Դ. «Անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում»

39. Կառավարությունը պնդում էր, որ 1983թ. օրենքի 75-րդ բաժինը նախատեսում է ծախսերի մասնակի սահմանափակումներ (տես վերոհիշյալ 31-րդ կետը), որոնք ավելի ընդարձակ չեն, քան անհրաժեշտ է իրավաչափ նպատակին հասնելու համար: Դատարանը նշում է, որ գոյություն ունեին հաղորդակցման այլ միջոցներ, որոնք նույնպես հասանելի էին տկն Բաունանին, օրինակ՝ նա կարող էր հիմադրել իր սեփական թերթը, մամուլում հրատարակել մամակներ կամ հոդվածներ, մասնակցել հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կազմակերպվող հարցազրույցներին, ընտրություններում ներկայացնել իր սեփական թեկնածությունը կամ թռուցիկներ տպագրել առանց որևէ թեկնածուի խրախուսելու կամ խոչընդոտելու:

40. Դիմողը, ինչպես և Հանձնաժողովը, գտել է, որ կիրառվող սահմանափակումներն անհամաչափ են: Դիմողն առարկում էր, որ ամենևին էլ սոցիալական խիստ անհրաժեշտություն չկա արգելելու փաստացի ճշգրիտ

տեղեկության տարածումը պետական պաշտոնում առաջադրված թեկնածուների դիրքորոշման մասին՝ բարոյականության կարևորագույն հարցերի վերաբերյալ: Ընդհակառակը, խիստ անհրաժեշտություն էր, մինչև ընտրությունները, թույլ չտալ, որպեսզի նմանատիպ հարցերը ներառվեին քաղաքական օրակարգում: Չնայած Կառավարությունը պնդում էր, որ սահմանափակումն անհրաժեշտ էր թեկնածուների միջև հավասարություն ապահովելու համար, սակայն ոչինչ չի վկայում այն մասին, որ տկն Բաումանի թռուցիկները որևէ թեկնածուի համար բացասական հետևանք են ունեցել, քանի որ հնարավոր էր, որ թռուցիկներում պարունակվող տեղեկությունը զրավեր արհեստական վիժեցման ինչպես կողմնակիցներին, այնպես էլ հակառակորդներին: Ավելին, նա հայտարարել է, որ սահմանափակումներն անտրամաբանական են, քանի որ զանգվածային լրատվության միջոցների համար որևէ սահմանափակում նախատեսված չէ որևէ թեկնածուի կողմ կամ դեմ նյութ հրապարակելու համար, քաղաքական կուսակցությունների և նրանց հովանավորյալների համար՝ ազգային կամ տեղական մակարդակով գովազդի ծախսերը վճարելու հարցում, քանի դեռ դրանք դրականորեն կամ բացասաբար չեն ազդում որևէ մասնավոր թեկնածուի ընտրական հնարավորությունների վրա:

41. Դատարանը նախապես նկատի էր առել այն փաստը, որ 1983թ. օրենքի 75-րդ բաժնում նախատեսված ծախսերին առնչվող սահմանափակումը Միացյալ Թագավորության ընտրական օրենսդրությամբ սահմանված բազմաթիվ վերահսկումների ու հավասարակշռումների մանրամասնված համակարգի միայն մեկ տարրն է: Այս ենթատեքստում 10-րդ հոդվածով նախատեսված ազատ արտահայտման իրավունքը անհրաժեշտ է նկատի ունենալ Կոնվենցիային կից թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով

սահմանված ազատ ընտրության իրավունքի տեսանկյունից, որում մասնավորապես նշված է.

«Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս»:

42. Ազատ ընտրությունները և խոսքի ազատությունը, մասնավորապես, քաղաքական վիճաբանությունների ազատությունը միասին կազմում են ժողովրդավարական համակարգի հիմնաքարը (տես Մեթյու Սոհիինը և Քլերֆեյտն ընդդեմ Բելգիայի 1987թ. մարտի 2-ի Շարքեր Ա թիվ 113 վճռի 22-րդ էջ, 47-րդ կետ և Լինգենսն ընդդեմ Ավստրիայի 1986թ. հուլիսի 8-ի Ա շարքեր, թիվ 103 վճռի էջ 26, 41-րդ և 42-րդ կետեր): Երկու իրավունքներն էլ գտնվում են փոխադարձ կապի մեջ և գործում են լրացնելով միմյանց, օրինակ՝ ինչպես Դատարանը նախկինում նկատել է. ազատ արտահայտվելն այն պայմաններից մեկն է, որն անհրաժեշտ է «ապահովելու կարծիքի ազատ արտահայտման հնարավորությունն օրենսդիր իշխանություն ընտրելիս» (տես վերոհիշյալ Մեթյու Սոհիինի և Քլերֆեյտի վճռի էջ 24, 54-րդ կետ): Այս առումով՝ այն առավել կարևորվում է մասնավորապես նախընտրական շրջանում տարբեր տեսակետների և տեղեկության հնարավորինս ազատ շրջանառությունն ապահովելու նպատակով:

43. Սակայն որոշակի պայմաններում այդ երկու իրավունքները կարող են հակասել միմյանց, և այդ դեպքում անհրաժեշտ է նախընտրական շրջանում կամ ընտրությունների ընթացքում խոսքի ազատության նկատմամբ կիրառել հատուկ սահմանափակումներ, որոնք սովորաբար անընդունելի են, նպատակ ունենալով ապահովելու «ժողովրդի տեսակետն ազատ

արտահայտելու հնարավորությունն օրենսդրի ընտրության դեպքում»:
Դատարանն ընդունել է, որ այս երկու իրավունքների միջև
հավասարակշռության հանգույցում Պայմանավորվող պետություններն ունեն
զնահատման սահմանագիծ՝ ընդհանուր առմամբ կապված նրանց ընտրական
համակարգի կազմակերպման հետ (տես վերոհիշյալ Մեթյու Մոհինի և
Քլերֆեյտի վճիռը, էջեր 23 և 24, 40 և 54 կետեր):

44. Սույն գործով Դատարանի խնդիրն է որոշել տվյալ
պարագաներում տկն Բաումանի խոսքի ազատության սահմանափակման և
իրավաչափ նպատակի համապատասխանության և ազգային
իշխանությունների՝ իրենց գործողություններն արդարացնող պատճառներին
զնահատական տալու հարցերը (տես վերոհիշյալ Լինգենսի վճիռը, էջ 26, կետ
40):

45. Տվյալ դեպքում, Կառավարությունը կարևորել էր այն, որ 1983թ.
օրենքի 75-րդ բաժնում նախատեսված ծախսերի վերաբերյալ
սահմանափակումը չի գերազանցում 5 GBP-ն, և որ տվյալ սահմանափակումը
կիրառվում է մինչև հիմնական ընտրությունները 4-6 շաբաթ առաջ (տես
վերոհիշյալ 16 և 18-19 կետերը): Այնուամենայնիվ, իրականում թեև տկն
Բաումանը կարող էր ընտրարշավ ձեռնարկել մեկ այլ ժամանակ, սակայն
Դատարանը գտնում է, որ դա չէր կարող ծառայել նրա նպատակին՝
թռուցիկների հրապարակմանը, որոնք նվազագույնը Հալիֆաքսի
բնակիչներին տեղեկացնում էին երեք թեկնածուների ընտրական գործին ու
արհեստական վիժեցման վերաբերյալ նրանց վերաբերմունքի մասին այն
պահին, երբ նրանց ուշադրությունը կենտրոնացված էր իրենց
ներկայացուցիչների ընտրության վրա (տես վերոհիշյալ 11-րդ կետը) :

46. Դատարանը նշել է, որ Կառավարության թույլտվությամբ դիմողը ընտրողներին տեղեկություն ներկայացնելու նպատակով կարող էր օգտագործել այլ միջոցներ: Սակայն վերջինս չէր բավարարվել դրանցով և գործնականում դիմել էր հաղորդակցման արդյունավետ այլ միջոցների: Օրինակ՝ չի հավաստվել, որ թռուցիկներում պարունակվող տեղեկությունները նրա կողմից հրապարակվել են մամուլում կամ հեռուստատեսության և ռադիոյի միջոցով: Հնարավոր է, որ նա կողմ էր ընտրություններին, և իրավունք ուներ ծախսելու թեկնածուների առնչությամբ օրենքով նախատեսված գումարը, սակայն ի սկզբանե պետք է մուծեր 500 GBP, որն, ամենայն հավանականությամբ, չէր վերադարձվելու (տես վերոհիշյալ 17-րդ և 18-րդ կետերը): Ավելին, նա չէր ցանկանում ընտրվել խորհրդարանում, այլ միայն ցանկանում էր զբաղվել ընտրողների համար թռուցիկներ տարածելով:

47. Ընդհանրացնելով՝ Դատարանը գտել է, որ 1983թ. օրենքի 75-րդ բաժինը կիրառելի է բոլոր գործնական նպատակներով, այդ թվում՝ որպես վերջնական խոչընդոտ տկն Բաումանի կողմից հրապարակված տեղեկությունների համար, այն իմաստով, որ դրանք կարող էին ազդել Չալիֆաքսի ընտրողների վրա՝ արհեստական վիժեցման դեմ պայքարող թեկնածուների օգտին քվեարկելու համար: Բավարար չի կարող համարվել նաև այն, որ օրենքով թեկնածուներին հավասար պայմաններ ապահովելու նպատակով անհրաժեշտ էր սահմանափակել դիմողի ծախսերը 5 GBP-ով, այն դեպքում, երբ որևէ ձևով սահմանափակումներ նախատեսված չեն մամուլի կողմից որևէ թեկնածուի ընտրությանն օժանդակելու կամ խոչընդոտելու համար, կամ քաղաքական կուսակցություններին և նրանց հովանավորյալներին՝ ազգային կամ տարածքային մակարդակով զովազդելու հնարավորությունները սահմանափակելու համար, միաժամանակ

սահմանելով, որ նման գովազդները չպետք է ուղղված լինեն աջակցելու կամ խոչընդոտելու որևէ կոնկրետ թեկնածուի ընտրական հնարավորությունները (տես վերոհիշյալ 22-րդ կետը): Յետևաբար, կարելի է եզրակացնել, որ տվյալ հարցում կիրառված սահմանափակումներն անհամապատասխան են հետապնդվող նպատակին:

Ուստի, կարելի է հավաստել, որ խախտվել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 50-ՐԴ ՅՈՂՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

48. Դիմողն ակնկալել է արդարացի բավարարում՝ ըստ Կոնվենցիայի 50-րդ հոդվածի, որը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմերի դատական կամ այլ իշխանությունների կողմից կայացված որոշումը կամ ձեռնարկված միջոցառումներն ամբողջովին կամ մասամբ հակասում են Կոնվենցիայից բխող պարտավորություններին և, եթե տվյալ Կողմի ներպետական իրավունքը տվյալ որոշման կամ միջոցառման հետևանքները վերացնելու նպատակով ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

Ա. Ոչ նյութական վնասը

49. Տկն Բաուճանը պահանջել է 15000 GBP՝ ի հատուցումն հետապնդումների հետևանքով անոթի զգացում, լարվածություն ու անհանգստություն կրելու համար:

50. Կառավարությունն ընդունել էր, որ խախտում հայտնաբերելու դեպքում համապատասխան միջոցներ ձեռք կառնվեն:

51. Դատարանը գտել է, որ ըստ գործի բոլոր հանգամանքների՝ խախտման ճանաչումը բավարար արդարացի փոխհատուցում է ցանկացած ոչ նյութական վնասի համար, որ կրել է դիմողը:

Բ. Ծախքեր ու ծախսեր

1. Ներպետական վարույթ

52. Տկն Բաուճանը պահանջում էր իր կատարած ներպետական իրավական ծախսերի փոխհատուցում, որը չէր տրամադրվել իրավական օգնության շրջանակներում և կազմում էր 1,633.64 GBP:

53. Կառավարությունն առարկում էր ներպետական իրավական որևէ ծախսի փոխհատուցում տրամադրելու դեմ:

54. Դատարանը բավարարվել էր, քանի որ ծախսերի վերաբերյալ հարցը դիմողի կողմից ներկայացվել էր գործի քննության ներպետական վարույթի ընթացքում, իսկ չափի առումով այն միանգամայն պատճառաբանված էր (տես Սանդի թայմսն ընդդեմ Մեծ Բրիտանիայի թիվ 1 1980թ. նոյեմբերի 6-ի վճիռը շարքեր Ա, թիվ 38, էջ 13, 23-րդ կետ):

Չետևաբար, ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) հետ մեկտեղ, ընդհանուր առմամբ, հատուցման վերաբերյալ վճարումները հնարավոր է բավարարել:

2. Վարույթը Ստրասբուրգում

55. Դիմողը խնդրել էր Ստրասբուրգի վարույթի ընթացքում ծախսերի և ծախքերի գումարը բարձրացնել մինչև 35 490 GBP:

56. Կառավարության խորհրդատուն դատական քննության ընթացքում նշել էր, որ նշված գումարը չափազանցված է:

57. Դատարանն անաչառ կերպով որոշեց տրամադրել 25 000 GBP՝ հաշվի առնելով Ստրասբուրգում գործի վարույթի հետ կապված ծախսերն ու վճարումները՝ ներառյալ ԱԱՀ-ի հնարավոր վճարումները:

Դ. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում

58. Դատարանն անհրաժեշտ է համարում ընդունել սույն վճռի կայացման պահին Միացյալ Թագավորությունում կիրառելի՝ օրենքով սահմանված տոկոսադրույքը, այն է՝ տարեկան 8%:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Միաձայն մերժում է Կառավարության նախնական առարկությունը:

2. Վճռում է տասնչորս ձայնով՝ ընդդեմ վեցի, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

3. Վճռում է, միաձայն, որ խախտման ճանաչումը բավարար է դիմողի կրած որևէ ոչ նյութական վնասի փոխհատուցման համար:

4. Վճռում է, միաձայն, որ՝

ա. պատասխանող պետությունը պետք է եռամսյա ժամկետում դիմողին վճարի 26.633.64 ֆունտ ստեռլինգ (քսան վեց հազար վեց հարյուր երեսուներեք ֆունտ և վաթսուներորս պենս)՝ ծախքերի ու ծախսերի դիմաց՝ գանձվելիք ցանկացած ավելացված արժեքի հարկի հետ մեկտեղ,

բ. տարեկան 8% սովորական տոկոս պետք է վճարվի՝ սկսած վերոհիշյալ եռամսյա ժամկետի լրանալուց հետո մինչև վճարումը:

5. Մերժում է, միաձայն, արդարացի հատուցման մասին դիմողի պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով, և հրապարակվել է դռնբաց նիստում՝ Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1998թ. փետրվարի 19-ին:

Չերբերտ Պեցոլդ

Ռուդոլֆ Բեռնհարդտ

Քարտուղար

Նախագահ

Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 53-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն սույն վճռին կցվում են հետևյալ կարծիքները.

(ա) պրն Պետիտիի, պրն Լոպես Ռոչայի և պրն Կասադիվալի համընկնող համատեղ կարծիքները,

(բ) պրն Վալտիկոսի մասնակի չհամընկնող կարծիքը.

(գ) պրն Լուիզուի, պրն Բակայի և պրն Ջամբրեկի մասնակի չհամընկնող համատեղ կարծիքները.

(դ) սըր Ջոն Ֆրիլանդի և նրան միացած պրն Լևիցի մասնակի չհամընկնող կարծիքները:

**Պրն ՊԵՏԻՏԻ, պրն ԼՈՊԵՍ ՌՈՇԱՅԻ և պրն ԿԱՍԱԴԻՎԱԼԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ
ՀԱՄԱՏԵՂ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ**

(Թարգմանություն)

1. Մենք մեծամասնության հետ ամբողջովին համամիտ ենք դատարանի որոշմանը:

2. Մենք, այնուամենայնիվ, չենք կարող համաձայնել վճռի 47-րդ կետում ներկայացված այն փաստին, որ 1983թ. ժողովրդի ներկայացուցչության մասին օրենքի 75-րդ բաժինն օգտագործվել է բոլոր գործնական նպատակներով, այդ թվում որպես խոչընդոտ տկն Բաումանի հրապարակումներին՝ «արհեստական վիժեցման դեմ ելույթ ունեցող թեկնածուների օգտին քվեարկելու նպատակով Հալիֆաքսի ընտրողների վրա ազդեցություն գործադրելու առումով»:

Նշված արտահայտությունից ակնհայտ է, որ դիմողի կողմից հրապարակված թռուցիկի կառուցվածքից ելնելով՝ Դատարանը գտել է, որ վերջինս խախտել է օրենքի այն կանոնը, որն արգելում է «թեկնածուի ընտրություններին օժանդակելու կամ դրա համար միջոցներ հայթայթելու նպատակով» ծախսեր կատարելը:

3. 75-րդ մասը չի արգելում՝ հասարակությանը տեղեկատվությամբ ապահովելու նպատակով փաստերի կամ մեկնաբանությունների հրապարակումը:

4. Մեր կարծիքով՝ 47-րդ կետի առաջին 4 տողերում ասվում է ոչ այլ ինչ, քան, որ թռուցիկը հրապարակվել էր «Հալիֆաքսի ընտրողներին արհեստական վիժեցման վերաբերյալ թեկնածուների կարծիքները ներկայացնելու նպատակով»:

ԴԱՏԱՎՈՐ ՎԱՆՏԻԿՈՍԻ ՄԱՍՆԱԿԻ ՉՀԱՍՆԵՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

(Թարգմանություն)

Ես չեմ կարող ընդունել այն փաստը, որ բրիտանական ընտրական համակարգը սահմանափակելով նախընտրական ժամանակաընթացքում «ոչ իրավասու» անձանց կողմից կատարված ծախսերը՝ թեկնածուի հնարավորություններին օժանդակելու կամ խոչընդոտելու առումով, կարող է առաջացնել Կոնվենցիայի խախտում: Թեև ընդունելի է տվյալ կետի տեսականորեն թույլ լինելու հանգամանքը, սակայն այն ընդունվել է հարուստ անհատների կամ կազմակերպությունների կողմից արդար ընտրությունների անցկացմանը չխոչընդոտելու, ընտրողների կարծիքների վրա բացասական ազդեցությունը բացառելու նպատակով՝ արգելելով անգամ փոքր քանակով ներդրումը, թեև տվյալ պարագայում գործ ունենք վիթխարի չափով գումարի հետ, որը բավականացրել է մեկ ու կես միլիոն թռուցիկներ հրատարակելու համար:

Մի փոքր անհիմաստ է փորձել բրիտանական Կառավարությանը դասեր տալ ընտրությունների կամ ժողովրդավարության վերաբերյալ: Բացի դրանից, սխալ է նաև տվյալ մոտեցման բացառումը, որի նպատակն է՝ ընտրությունների ժամանակ ոչ քաղաքական կուսակցության անդամի, առանձին անհատի, մարդկանց կարծիքների ազդեցության կանխումը, և ինչպես պրն Մարտինենսն իրավացիորեն առարկել էր Հանձնաժողովի զեկույցի լրացումներում, դա արվում է ֆինանսապես անկախ թեկնածուներին ֆինանսապես նվազ ապահով թեկնածուների նկատմամբ առավելություն չտալու համար:

Համապատասխանաբար, իմ կարծիքը տարբերվում է կայացրած վճռից, մասնավորապես, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման կապակցությամբ:

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԼՈՒԻՁՈՒԻ, ԲԱԿԱՅԻ և ՋԱՄԲՐԵԿԻ ՄԱՍՆԱԿԻ ՉՅԱՄԸՆԿՆՈՂ
ԿԱՐԾԻՔՆԵՐԸ**

1. Մենք համամիտ ենք դիմողին Կոնվենցիայի խախտման հետևանքով զոհ չճանաչելու վերաբերյալ Կառավարության նախնական առարկությունը Դատարանի կողմից մերժելու փաստին (տես վճռի 29-րդ կետը):

2. Սակայն մենք հնարավոր չենք համարում համաձայնել մեծամասնության կայացրած այն եզրակացությանը, որ խախտվել է դիմողի ազատ արտահայտման իրավունքը, քանի որ ժողովրդի ներկայացուցչության մասին 1983թ. օրենքի 75-րդ բաժնի 1-ին և 5-րդ կետերով նախատեսված սահմանափակումներն անհամաչափ են դրանց նպատակին:

3. Համաձայն 1983թ. օրենքի 75-րդ բաժնի 1-ին կետի, որևէ թեկնածուի օժանդակելու նպատակով երկրի որևէ տարածքում ընտրությունների կապակցությամբ որևէ անձի, ոչ թեկնածուի կամ նրա խմբի աշխատակցի կողմից կատարված ծախսը չպետք է գերազանցի թույլատրելի 5 ֆունտ ստեռլինգը: 1983թ. օրենքը չի արգելում քաղաքական կուսակցությանը, անհատին կամ կազմակերպությանը հրատարակչական ծախսեր կատարել քաղաքական կուսակցությանը կամ ընդհանրապես շարժմանն օժանդակելու կամ էլ խանգարելու նպատակով՝ ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակով, եթե այն չի հետապնդում որոշակի թեկնածուի որոշակի տարածքում աջակցելու կամ վնասելու նպատակ: Սահմանափակումներ չկան նաև որևէ կուսակցության ընտրություններում աջակցելու կամ խանգարելու նպատակով քաղաքական կուսակցություններին մասնավոր նվիրատվություններ կատարելու կամ մամուլի իշխանության առումով: 75-րդ բաժնում նախատեսված սահմանափակումները վերաբերում են միայն

թեկնածուների աջակցությանը, այլ ոչ թե շահերի աջակցությանը (տես վճռի 19-22-րդ կետերը):

4. Ինչպես Ղատարանում պարզվել էր՝ ծախսերի վերաբերյալ սահմանափակումն առաջացել է կատարված բազմաթիվ մանրամասն ուսումնասիրությունների արդյունքում, որի հիման վրա ձևավորվել է Միացյալ Թագավորության ընտրությունների գործող համակարգը: Այս ենթատեքստում Ղատարանը քննել էր Կոնվենցիային կից թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված ազատ ընտրությունների իրավունքը: Ղատարանը նշել է, որ խոսքի ազատությունը, ազատ ընտրությունները, մասնավորապես, քաղաքական վիճաբանության ազատությունը կազմում են ցանկացած ժողովրդավարական համակարգի հիմնաքարը, և այս երկու իրավունքները փոխկապակցված են և գործում են միմյանց լրացնելով: Ընդունվել է նաև, որ այս երկու իրավունքների հավասարակշռության պահպանության համար Պայմանավորվող կողմերն գնահատականի են արժանի՝ կախված նրանից, թե ինչպես են նրանք ընդհանրապես կազմակերպում իրենց ընտրական համակարգը: Մենք լիովին միանում ենք դատարանի կողմից կատարված՝ գործին վերաբերող վերլուծություններին (տես վճռի 41-43-րդ կետերը):

5. Կասկած չկա, որ ծախսերի վերաբերյալ սահմանափակումը, որը կիրառվում է ընտրարշավի ընթացքում, օգտագործվում է թեկնածուների համար ընտրության ընթացքում հավասար հնարավորությունների ստեղծման նպատակով, որը ժողովրդավարական հասարակության հիմնական սկզբունքն է: 1983թ. օրենքի 76-րդ բաժնում ներկայացված սահմանափակումներն առաջին հերթին վերաբերում են առավելություն ունեցող թեկնածուների կողմից անարդար առավելություն ձեռք բերելուն, հարուստ կողմնակիցներին կամ գործարար խմբերին, որոնք կարող են

թեկնածուին օգնելու կամ մեկ այլ թեկնածուի ընտրությունը կանխելու նպատակով զբաղվել վնասակար հարապարակային գործունեությամբ, որն էլ թեկնածուի ծախսերի սահմանափակման պատճառով կարող է մնալ անպատասխան (տես վճռի 18-րդ կետը):

6. Ի թիվս այլ պայմանների, 75-րդ բաժնում նախատեսված սահմանափակումներին վերաբերող տրամաբանությունը կիրառվում է ճնշում գործադրող խմբերի գործունեությունից թեկնածուներին պաշտպանելու նպատակով: Հարցի սահմանափակումը նեղ է և չի վերաբերում առանձին խմբի կարծիքի արտահայտման վերաբերյալ գոյություն ունեցող ընդհանուր արգելքի կիրառմանը, որովհետև ցանկացած խումբ որոշակի հարցի վերաբերյալ կարող է ունենալ իր տեսակետների կամ մեղադրանքների արտահայտման մի քանի տարբերակներ: Նրանք կարող են թուլցիկներ տարածել տեղեկատվության նպատակով, եթե չեն զբաղվում որոշակի թեկնածուի խոչընդոտելով, կամ հակառակը՝ աջակցելով: Այս սահմանափակումը, որը ենթակա է գնահատման պետության կողմից, ժողովրդավարական ընտրական համակարգի համընդհանուր տարրերից է:

7. Հանձնաժողովը հայտնաբերել էր (զեկույցի 39-րդ կետ), որ 75-րդ բաժինը «համապատասխանում է այլոց, հատկապես, տեղական ընտրողների իրավունքների պաշտպանության իրավաչափ նպատակին»: Ղատարանը նույնպես գտել է, որ 75-րդ բաժնի նպատակը, առավել ևս այն դիտարկելով 1983թ. օրենքով սահմանված՝ ընտրությունների վերաբերյալ կիրառվող ծախսերի մանրամասնությունների տեսանկյունից, թեկնածուների համար հավասար պայմաններ ստեղծելն է: Հետևաբար, եզրափակելով, ինչպես վարվել է Հանձնաժողովը, Ղատարանն արտահայտել է, որ տվյալ օրենքի կիրառումը տկն Բաումանի գործի առնչությամբ՝ հետապնդում է այլոց

իրավունքները պաշտպանելու իրավական նպատակ, հատկապես թեկնածուների, Հալիֆաքսի ընտրողների համար, և, այս առումով, կանգ է առել այն փաստի վրա, որ դատական հետապնդումը Մեծ Բրիտանիայի տարբեր մարզերում կարող է ունենալ տարբեր ազդեցություն (տես վճռի 38-րդ կետը): Մենք համամիտ ենք այս հետևությանը:

8. Մեր անհամաձայնությունը սահմանափակվում է Ղատարանի որոշման 47-րդ կետով, համաձայն որի՝ 75-րդ բաժինը կիրառվել է լիովին գործնական նպատակներով, որպես տկն Բաումանի կողմից տեղեկությունների հրապարակման միջոցով արհեստական վիժեցման դեմ ելույթ ունեցող թեկնածուների օգտին քվեարկելու նպատակով Հալիֆաքսի ընտրողների վրա ազդեցության ամբողջական խոչընդոտ: Մենք համաձայն չենք Ղատարանի հետ նաև այն հարցում, ըստ որի՝ դիմողի՝ ժախսերի ընդունված 5 GBP-ի սահմաններում սահմանափակելն անհրաժեշտ չէր թեկնածուների միջև հավասարության ապահովման իրավաչափ նպատակի իրագործման համար, հատկապես նկատի ունենալով մամուլի կողմից թեկնածուին աջակցելու կամ խոչընդոտելու ազատ և անսահմանափակ հնարավորությունները կամ քաղաքական կուսակցությունների և նրանց կողմնակիցների ազգային կամ տեղական մակարդակով գովազդելը, եթե դրանք չեն աջակցում կամ խոչընդոտում որոշակի ընտրատարածքում որևէ թեկնածուի ընտրական հնարավորություններին: Ուստի մենք համաձայն չենք Ղատարանի եզրակացությանը՝ կիրառված սահմանափակման և նպատակի անհամաչափ լինելու, հետևաբար, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման վերաբերյալ:

9. Մեր կարծիքով, քննարկելով 75-րդ բաժինը՝ օրենքով նախատեսված բոլոր մանրամասների հետ մեկտեղ, հնարավոր է եզրակացնել, որ վերջինս չի կարող խոչընդոտել տկն Բաումանին տեղեկատվություն հրապարակելու

գործում: Ինչպես նշվել էր, գոյություն ունեն ընտրողներին իրազեկելու տարբեր ճանապարհներ՝ միաժամանակ առանց խոչընդոտելու կամ աջակցելու որևէ թեկնածուի որևէ ընտրատարածքում: Սահմանափակումը պետք է ընկալվի ամբողջ ընտրական համակարգի մասշտաբով՝ հաշվի առնելով մարզերի առկայությունը, և որը գործում է մինչև ընտրություններն ընկած ժամանակահատվածը 1-4 շաբաթվա ընթացքում:

10. Կոնվենցիայի անդամ պետությունները սահմանել են միջամտության անհրաժեշտության գնահատման սահմանները, իսկ Ղատարանը, իր հերթին, պետք է որոշի միջամտության պատճառով ծագած դժգոհությունների և «իրավաչափ նպատակի» համապատասխանության հարցը, ինչպես նաև ազգային իշխանությունների կողմից ներկայացվող պատճառաբանությունների հիմնավորվածությունը (տես Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության 1991թ. նոյեմբերի 26-ի թիվ 2 վճիռը, Շարքեր Ա, թիվ 217, էջ 29, կետ 52, Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության 1996թ. մարտի 27 վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածու 1996-II, էջեր 500-501, 40-րդ կետ):

11. Վերոհիշյալ պատճառների հիման վրա մենք եզրակացնում ենք, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը չի խախտվել: Օրենքի 75-րդ բաժնում նախատեսված սահմանափակումը համաչափ է և չի գերազանցում ժողովրդավարական հասարակության անհրաժեշտ պայմաններն ու իրավաչափ նպատակը, որի համապատասխանությունը հաստատվել է Ղատարանի կողմից, և որը գտնվում է Միացյալ Թագավորությունում ընդունված գնահատման սահմաններում:

12. Մենք մասնավորապես հանգեցինք այս եզրակացությանը, քանի որ սահմանափակումները զսպումների ու հակակշիռների հետ

ժողովրդավարական ընտրական համակարգի անբաժան մասն են կազմում և նպատակ ունեն կանխել ծախսումների առավելագույն չափի շրջանցումը: Թեկնածուներին տրամադրվում է հավասար հնարավորություններ, նրանք պաշտպանված են ազդեցություն գործադրող խմբերի գործունեությունից, ուստի այսպիսի խմբերը գերադասում են գործել այն մարզերում, որտեղ ստացված արդյունքները կրում են սահմանային բնույթ, դրանց անկախությունն ապահովված է, չի արգելվում դրան ծախսել գործին աջակցելու նպատակով, եթե դա չի արվում շահադիտական միտումներով, որևէ թեկնածուի ընտրական ծրագրերին վնասելու համար, ինչպես նաև կիրառման առումով, նախատեսվող սահմանափակումները հավասարակշռված են, տրամադրվող ժամաքանակը նույնպես սահմանափակ է: Մենք կարծում ենք, որ պատասխանող Կառավարության կողմից ներկայացված պատճառները հաստատում են սահմանափակման «տեղին և բավարար» լինելը:

**ՍԸՐ ՋՈՆ ՖՐԻԼԱՆԴԻ և ՆՐԱՆ ՄԻԱՑԱԾ պրն ԼԵՎԻՑԻ ՄԱՍՆԱԿԻ
ՉՅԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ**

1. Ես չեմ կարող համաձայնել մեծամասնության եզրակացությանը, որ տկն Բաումանի ազատ արտահայտվելուն միջամտելը՝ ժողովրդավարական հասարակության «անհրաժեշտ պահանջների սահմաններից» դուրս է:

2. Ժողովրդավարական հասարակության գոյատևելու անհրաժեշտ պայմաններից է՝ ազատ և արդար խորհրդարանական ընտրությունների համակարգի ապահովումը: Կոնվենցիային կից թիվ 1 արձանագրության 3-րդ

հողվածում նշված պահանջներից է ազատ ընտրությունների կազմակերպումը Բարձր պայմանավորվող կողմերի կողմից՝ «ապահովելով ժողովրդի ազատ արտահայտման հնարավորությունները» օրենսդրի ձևավորման գործընթացում: Մեթյու Սոհիմը և Քլերֆեյտն ընդդեմ Բելգիայի (շարքեր Ա, թիվ 113, էջ 22, կետ 47) գործով 1987թ. մարտի 2-ին կայացված վճռում Դատարանն ընդունել էր, որ, քանի որ նշված հողվածը «արտացոլում է ժողովրդավարության բնորոշ հատկանիշը, այն Կոնվենցիայի համակարգում ունի շատ կարևոր նշանակություն»:

3. Նույն վճռում Դատարանն ավելին է ճանաչել՝ նշելով, որ (էջ 24, 54 կետ), «Պայմանավորվող պետություններն ընտրական համակարգեր ընտրելու հարցում կողմերի գնահատման մեծ հնարավորություններ ունեն», ընդգծելով, որ նման համակարգերն ուղղված են այնպիսի, հաճախ անհամատեղելի նպատակների իրագործմանը, ինչպիսիք են, մի կողմից, մարդկանց կարծիքների ճիշտ և արդարացի արտահայտումը և, մյուս կողմից՝ ուղղորդումը հստակ և ոչ հակասական քաղաքական կամքի կայացմանը նպաստելու նպատակով»: Ջարմանալի չէ, որ ընտրական համակարգերը խիստ տարբերվում են միմյանցից, որը պայմանավորված է ազգային պատմության ու նկարագրի հետ:

4. Միացյալ Թագավորությունը հայտնի է խորհրդարանական իր հին սովորույթներով և ընտրական համակարգով, որը երկար տարիների ընթացքում զարգացել է՝ ենթարկվելով փոփոխությունների (որը տարբեր տեսակետներից շարունակում է մնալ հասարակական բանավեճերի մշտական առարկան): 1983թ. ժողովրդական ներկայացուցչության մասին օրենքում ուղղումներ կատարելուց հետո ներկայացվեցին ընտրություններ անցկացնելու կարգի մասին մանրամասն ու միմյանց հետ կապված

կանոններ, որոնք արտահայտում են օրենսդրության տեսակետն այս չափազանց կարևոր հարցի վերաբերյալ՝ ապահովելով մարդկանց կարծիքի ազատ և արդար արտահայտման հնարավորությունը:

5. Օրենքով սահմանված համակարգի մի մասն է 1983թ. օրենքի 75-րդ բաժինը, որին համապատասխան տկն Բաումանը ենթարկվել էր քրեական հետապնդման: Այս բաժինը՝ 76-րդ բաժնի հետ մեկտեղ սահմանափակելով այն ծախսերի գումարի չափը, որը կարող է ծառայել որևէ թեկնածուի ընտրական ծրագրի բարելավմանը՝ խոչընդոտելով մյուսներին, նպատակ ունի ընտրություններին մասնակցող թեկնածուների շրջանում ապահովել արդար ընտրություններ: 76-րդ բաժնում նախատեսված՝ թեկնածուների ընտրական ծախսերի սահմանափակումները արդյունավետ չէին լինի, եթե չլինեին այդ նպատակով այլոց կողմից կատարվող ծախսերի՝ 75-րդ բաժնում ամրագրված համապատասխան սահմանափակումները:

6. 75-րդ բաժնում նախատեսված սահմանափակման կարևոր առանձնահատկությունն այն է, որ սահմանված գումարից ավելի ծախսերի ներդրման փաստն ընկալվում է որպես «թեկնածուի ընտրություններին աջակցություն ցույց տալու նպատակով»: Այս բաժինը չի կանխում փաստացի նյութերի կամ մեկնաբանությունների կապակցությամբ կատարվող ծախսերը, որոնք կատարվում են հասարակության իրազեկման նպատակով: Այս մասի պահանջներին համապատասխան հետապնդումը կարող էր հաջողության հասնել, անգամ երդվյալներն անհապաղ կբավարարվեին, չնայած մեղադրյալի կողմից թեկնածուների ընտրական ծրագրերը բարելավելու կամ խոչընդոտելու ցանկությանը, որոնք հենց այն պատճառներից են, որ դրդում են լրացուցիչ ծախսերի կատարման (տես լորդ Դիպլոքի ելույթի, որը տեղի էր ունեցել Լյուֆտում, էջ 983, Ս-ից Դ-ին ուղղված նամակներում):

7. Տկն Բաուճանի կողմից հայտարարվել էր, որ թռուցիկների տարածման կապակցությամբ ծախսեր կատարելով՝ իր միակ ցանկությունն է եղել ճշգրիտ և փաստացի տեղեկություն ներկայացնել, և նա շահագրգռված չէր որևէ թեկնածուի ընտրությանն աջակցելուն, այլ ցանկանում էր ներկայացնել իր սեփական համոզմունքները: 1993 թվականի դատական քննության եզրակացությունը հետևյալն էր՝ հայտնի չէ, թե այդ հիմքով պաշտպանվելու դեպքում նա կհասներ հաջողության, թե՛ ոչ (տես վճռի 14-րդ կետը): Պարզ է այն, որ 75-րդ բաժինը չի արգելել նրան կամ էլ նրա կազմակերպությանը տեղեկացնել ընտրողներին արհեստական վիժեցման կամ սաղմի հետ կապված փորձերի մասին, կամ խրախուսել նրանց, հարցաքննել թեկնածուներին այդ կապակցությամբ, քանի որ թեկնածուներին աջակցելու կամ խոչընդոտելու նպատակով թեկնածուների ընտրական ծրագրերի համար ծախսվել էր օրենքով թույլատրելի գումարը:

8. Դատարանը վճռի 38-րդ մասում նշել էր, որ 1983թ. օրենքի 75-րդ բաժինը և ընտրությունների ժամանակ կիրառվող ծախսերի վերաբերյալ մյուս նյութերը միասին հնարավորություն են տալիս եզրակացնել, որ դրանց ընդհանուր նպատակն է թեկնածուների համար ապահովել հավասար պայմաններ: Ուստի կարելի է եզրակացնել, որ «տվյալ օրենքի կիրառումը տկն Բաուճանի նկատմամբ հետապնդում է այլոց, հատկապես ընտրություններին մասնակցող թեկնածուների և Հալիֆաքսի ընտրողների իրավունքները պաշպանելու իրավաչափ նպատակ, և այս ամենի հիման վրա կարելի է եզրակացնել, որ դատական հետապնդումը տարբեր կերպ է գործում Միացյալ Թագավորության տարածքում»:

9. Վճռում, *inter alia*, ընդունվում է, որ ընտրություններին մասնակցող թեկնածուների արդար պայքարին կարելի է նպաստել, մասնավորապես,

կանխելով երրորդ կողմի մասնակցությունն ընտրարշավին՝ որևէ թեկնածուի օգտին, կամ հակառակը՝ առանց ֆինանսական սահմանափակումների կամ ծախսելով անսահմանափակ գումարներ տեղեկատվության տարածման համար, որն իր հերթին կարող է պատասխան ծախսերի առիթ դառնալ ընտրությունների առանց այն էլ սահմանափակ բյուջեի պայմաններում: Սակայն պետք է ուշադրություն դարձնել այն փաստի կարևորության վրա, որ 75-րդ բաժնում (Ժողովրդական ներկայացուցչության օրենքի մասին 14-րդ մասի 3 կետով) ծախսերի վերաբերյալ սահմանափակումները կազմում են 5 GBP (տես 45-րդ կետը): Դրանից հետո 47-րդ կետում ասվում է՝ 75-րդ բաժինը «աջակցում է բոլոր գործնական նպատակներին, հատկապես, ինչպիսին է Զալիֆաքսի ընտրողների վրա ազդեցություն գործադրելու ճանապարհով արհեստական վիժեցման դեմ ելույթ ունեցող թեկնածուների օգտին քվեարկելու նպատակով տկն Բաումանի կողմից տեղեկության տարածմանը խոչընդոտելուն»: Դատարանը չի բավարարվել այն բացատրությամբ, որ «ծախսերն անհրաժեշտ էր սահմանափակել 5 GBP-ով, թեկնածուներին հավասար պայմաններ ապահովելու իրավաչափ նպատակի համար...»:

10. Մինչդեռ իրավաչափ նպատակի իրագործմանը՝ մասնակցող թեկնածուների համար հավասար պայմանների ապահովելու առումով, անկասկած, կարող է նպաստել երրորդ մասնակցի կողմից ներդրված ծախսերի սահմանափակումը, անգամ արգելումը, այլ ոչ թե հակառակը՝ դրա ավելացումը, քանի ընտրություններին թեկնածուների կողմից ծախսվող գումարներն առայսօր սահմանափակված են բավականին նվազ չափով: Անգամ չէր առաջարկվել, որ Կոնվենցիայի կամ այլ պայմանագրերի պահանջներին համապատասխան՝ Միացյալ Թագավորությունը պարտավոր է ավելացնել Խորհրդարանի կողմից հաստատված և ընդունված

ընտրություններին մասնակցող թեկնածուների կողմից ներդրվող ծախսերի վերաբերյալ սահմանափակումները:

11. Վճռի 47-րդ կետը նույնպես հակասում է 75-րդ բաժնում նախատեսված սահմանափակումներին այն պատճառով, որ սահմանափակված չեն քաղաքական կուսակցությունների և նրանց օժանդակողների կողմից ազգային կամ տեղական մակարդակով իրենց գովազդի համար կատարվող ծախսերը, եթե դա չի աջակցում կամ խոչընդոտում որևէ ընտրատարածքում որևէ թեկնածուի ընտրական ծրագրերին, կամ էլ մամուլի կողմից որևէ թեկնածուի օգնելու կամ խոչընդոտելու նպատակ չի հետապնդում: Սակայն դժվար չէ հասկանալ, որ օրենքով սահմանված կարգով առանձնահատուկ կարևորությամբ արդարության ապահովումը նպատակ ունի ամբողջականացնել ընտրական գործընթացը և, իհարկե, Ռատարանը՝ հաշվի առնելով նախկինում տեղի ունեցած դեպքերը, չի կարող չանդրադառնալ մամուլի ունեցած կարևորագույն ազդեցությանը ժողովրդավարական հասարակությունում (տես Լինգենսն ընդդեմ Ավստրիայի 1986թ. հուլիսի 8 վճիռը, Շարքեր Ա, թիվ 103, էջ 26, կետ 41):

12. Միջամտությունն ազատ արտահայտման իրավունքին, որը 75-րդ բաժնում նախատեսված է երրորդ անձանց կողմից թեկնածուի ընտրական ծրագրերին նպաստելը կամ հակառակը՝ խոչընդոտելը կանխելու համար, կրում է շատ սահմանափակ բնույթ: Ես կարծում եմ, որ դա գտնվում է Պայմանավորվող պետությունների հայեցողությանը թողնված գնահատման սահմաններում և որոշվում է՝ հիմնվելով պատմական փորձի և ներկայի վրա, որն անհրաժեշտ է ժողովրդավարության համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքի համար, ինչպիսին է խորհրդարանական ընտրությունների ընթացքի ճշգրիտ կառավարումը (ես կցանկանայի

ավելացնել, որ նրանց հարկավոր է զգուշորեն ընտրել և կիրառել իր կառուցվածքով և նույնատիպ գործողությամբ համընկնող մոտեցումը, որը հիմնվում է միջազգային իրավական ակտերի վրա և ներկայացվել է երկարատև փորձ ունեցող ժողովրդավարական խորհրդարանի կողմից):

13. Ես նույնպես կցանկանայի մատնանշել այն կարևորագույն դերը, ինչպես տեղեկացրել է Կառավարությունը, ինչն ունեն ազդեցիկ խմբերը ժամանակակից ժողովրդավարության պայմաններում հասարակական կարծիքը ձևավորելու և դրա վրա ազդելու հարցում: Սակայն ընտրական գործընթացը ղեկավարելու առումով Կառավարությունը կարող է, հաշվի առնելով ֆինանսավորման լայն հնարավորությունները, օրենքով կիրառել սահմանափակումներ եզակի դեպքի՝ խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի նկատմամբ՝ նկատի ունենալով բազմաթիվ վիճաբանություններին բախվելու հնարավոր վտանգը և հետապնդելով «պարզ և հետևողական սկզբունքը՝ ուղղորդել մտքերն այնպես, որ հնարավոր լինի նպաստել հստակ և ոչ հակասական քաղաքական կամքի կայացմանը» (տես Դատարանի կողմից ճանաչված երկրորդ նպատակը, որը ներկայացված է վերը, Մեթյու Մոհինը և Քլերֆեյտը գործի վերաբերյալ ընդունած վճռի մեջբերված 3-րդ պարբերությունում):

14. Ի վերջո, կանգ առնելով համաչափության հարցի վրա՝ անհրաժեշտ է նշել, որ 75-րդ բաժինը չի կանխում 1992թ. տեղի ունեցած ընդհանուր ընտրություններին տկն Բաումանի կողմից հրապարակված 1.5 մլն թռուցիկների տարածումն ամբողջ Միացյալ Թագավորության տարածքով, այլ ընդգրկում է միայն Հալիֆաքս մարզում 25000 թռուցիկների շրջանառությունը՝ անգամ հաշվի չառնելով քրեական հետապնդման հետ կապված զուտ տեխնիկական, ժամանակային սահմանափակումների

պատճառները: Բոլոր հանգամանքները հաշվի առնելով՝ նրա ազատ արտահայտման իրավունքին միջամտությունը չափազանց նեղ անհրաժեշտություն չկա:

15. Արտահայտելով իմ հարգանքը՝ ես կցանկանայի նշել մեծամասնության կողմից ներկայացված եզրակացություններին իմ համամիտ լինելը, սակայն վերոհիշյալ պատճառների հիման վրա ես չեմ գտնում, որ տվյալ դեպքում տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: